ՀՏԴ 005.591.6:378

Ա.Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Ա.Լ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիտարկվում են նորարարական մանկավարժության էությունը և առանձնահատկությունները, նորարարական կարողությունները մանկավարժության տեսանկյունից, նորարարական մոտեցումների կիրառման հնարավորությունները ուսուցման գործընթացում:

Առանցքային բառեր. նորարարական մանկավարժություն, նորարարական կարողություններ, ուսումնամանկավարժական ձևավորում, ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներ, միջառարկայական ուսուցում:

Ժամանակակից կրթական միջավայրն արդեն վաղուց հնարավոր չէ պատկերացնել նախկին ուսումնամանկավարժական ձևավորմամբ և մոտեցումներով հագեցված ուսումնական գործընթացի իրականացման շրջանակներում: Արդյունավետ ուսուցումն այսօր դիտարկվում է որպես նորարարական մանկավարժական մոտեցումներով, տեխնոլոգիապես հագեցած, քննադատական մտածելակերպ զարգացնող, թիմային աշխատանք և հաղորդակցման հմտություններ ձևավորող, նոր ձևաչափերին համապատասխան ուսուցանվող նյութի բովանդակությամբ հագեցված համակարգային մոտեցում, որն ուղղված է լուծելու շուկայում գործող եռանկյունու՝ պետության, գործատուի և ուսանողի խնդիրները գործազրկության, աշխատուժի շուկայի և մրցունակ մասնագետների ապահովման տեսանկյունից:

ԵՄ երկրներում, մասնավորապես Ֆինլանդիայում արդեն շուրջ տասը տարի շարունակ ուսուցման մեջ առանձնահատուկ կարևորություն են տալիս ուսանողների նորարարական կարողությունների զարգացմանը՝ հիմնավորելով, որ միայն այդ կերպ է հնարավոր երկրի տնտեսության ռազմավարական ոլորտներում ունենալ և ապահովել շարունակական աճ:

Գիտելիքի ձևավորման տեսանկյունից նորարարությունը կարելի է սահմանել որպես գիտելիքների անդադար կատարելագործման գործընթաց, որի արդյունքում ստեղծվում են նոր կայուն գաղափարներ, հմտություններ կամ աշխատանքային կյանքում կիրառվող նոր փորձ:

Նորարարական մանկավարժությունը ուսուցման նոր մոտեցում է, որը ենթադրում է ուսումնամանկավարժական նոր տեխնոլոգիաների կիրառում, ինչի արդյունքում նորովի է սահմանվում գիտելիքի յուրացման ձևը՝ նպաստելով նորույթների ստեղծմանն ու նորարարությունների իրականացմանը [1]:

Ուսումնամանկավարժական ձևավորումը, իր հերթին, մանկավարժական մոդելների և մեթոդների ամբողջություն է, որն անհրաժեշտ է գիտելիքների փոխանցման, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման համար [2]:

Դիտարկելով ավանդական ուսուցման և նորարարական ուսուցման միջավայրերը՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ երկրորդ դեպքում ենթադրվում է անընդհատ փոփոխվող, անկայուն իրավիճակ, երբ ուսուցումը նախատեսում է ոչ ավանդական լուծումներ պահանջող, ձևավորված կարծրատիպերից դուրս մոտեցումներ (նկ.1): Գիտակցելով նորարարական մանկավարժության, ուսուցման նոր մոտեցումների կիրառման անհրաժեշտությունն ու հրատապությունը, բուհերում արմատական փոփոխությունների իրականացման պահանջն ավելի ու ավելի է կարևորվում: Այդ առումով անհրաժեշտություն է առաջանում իրականացնել հետևյալ առաջնային քայլերը.

1. Բուհերում այնպիսի ուսուցման իրականացում, որն ուղղված կլինի հատկապես նորարարական կարողությունների զարգացմանը:

2. Բազմակողմանի և փոխկապակցված բարձրագույն կրթական համակարգերի ձևավորում և ներդրում:

3. Ապագայում իրական և գործնական խնդիրներ լուծելու կարողությունների և հմտությունների զարգացում:

4. Բուհերում ուսուցման գործընթացում ձեռներեցության և կոմերցիոն հմտությունների ապահովում:



Նկ. 1. Կրթական ոլորտի փոփոխություններն ըստ նորարարական ուսուցման

Նշված առաջնային քայլերը հաջողությամբ իրականացնելու տեսանկյունից անհրաժեշտ է հաշվի առնել նաև դժվարություններն ու խնդիրները, որոնք կարող են առաջանալ փոփոխությունների իրականացման ճանապարհին: Այդ տեսանկյունից կարելի է առանձնացնել հետևյալ հարցերն ու խնդիրները՝ արդյո՞ք համալսարանները, գործատուները և ուսանողները պատրաստ են նորարարական ուսուցմանն ուղղված փոփոխությունների իրականացմանը և որքանո՞վ են պատրաստ ֆինանսական, մարդկային, ինֆորմացիոն, ժամանակային, նյութատեխնիկական ռեսուրսների տեսանկյունից:

Ինչպես արդեն սահմանվեց, նորարարական մանկավարժությունն առհասարակ այն ուսուցման մոտեցումների համալիրն է, որի ներդրման և իրականացման արդյունքում զարգանում են ուսանողների նորարարական կարողությունները: Նորարարական կարողություններ ասելով՝ ենթադրվում է ուսանողի քննադատական մտածողությամբ խնդրին վերաբերվելու, թիմով աշխատելու, հաղորդակցվելու, ստեղծագործելու և, որպես հետևանք, նորարարություններ իրականացնելու ունակությունները (նկ.2):



Նկ. 2. Նորարարական կարողությունները

Նշված կոմպետենցիաները/կարողությունները զարգացնելու, դրանց փաստացի կիրառումն ուսուցման գործընթացում ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել նորարարական ուսուցման հայեցակետերի իրականացում, որոնց հիմնական բաղադրիչները կարելի է ներկայացնել սխեմատիկ տեսքով (նկ.3):



Նկ. 3. Նորարարական ուսուցման հայեցակետերը

Առանձնացնելով հայեցակետերից մի քանիսը, կարելի է փաստել, որ շուկայի կոնյուկտուրան ժամանակակից պայմաններում պահանջում է ուսուցման մեջ դասավանդողի դերի փոփոխություն, մասնավորապես, փոխվում է դասավանդողի կարգավիճակը, անցնելով մենթորի, փորձագետի, համակարգողի, խորհրդատուի՝ դրանով իսկ ավելացնելով նաև ուսանողի ինքնուրույնության և ինքնաուսուցման բաղադրիչները: Նորարարական կարողությունների զարգացման մոտեցմամբ՝ ուսուցման ընթացքում դիտարվող խնդիրներն ընդունված կարծրատիպերով և կանոններով լուծումները փոխարինվում են համակարգային, քննադատական մտածողությամբ, ոչ միշտ ընդունելի և հստակ սահմանված լուծումներով, ինչի արդյունքում առաջանում են նորարարությունները:

Միջառարկայական ուսուցման էությունն այն է, որ տարբեր մասնագիտություններով սովորող ուսանողները ներգրավվում են թիմերում և իրականացնում են համալսարանի, գործատուի, որոշ դեպքերում նաև պետական նախագծեր՝ ապահովելով նախագծի հաջող իրականացման համար անհրաժեշտ բազմակարծությունն ու համալիր մտածելակերպը:

Նորարարական մանկավարժության կիրառման մեծ փորձ ունեցող Ֆինլանդիայում, մասնավորապես Տուրկուի կիրառական գիտությունների համալսա-

ռանում, INNOCENS ERASMUS+ ծրագրի շրջանակներում ուսումնասիրելով կրթական միջավայրը, պարզ դարձավ, որ համալսարաններում ակտիվորեն կիրառվում են նորարարական ուսուցման կազմակերպման մի քանի մոտեցումներ, որոնցից կարելի է առանձնացնել հիմնական չորսը (նկ.4):



Նկ. 4. Նորարարական ուսուցման կազմակերպման միավորները

Ծրագրային ինկուբատորի շրջանակներում ձևավորվում են գիտահետազոտական խմբեր, որոնք կենտրոնանում են կոնկրետ խնդիրների իրականացման շուրջ: Խմբում աշխատանքը մեծապես ազդում է ուսանողի անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա, ձևավորում ու զարգացնում ստեղծագործական և քննադատական մտածողության կարողությունները:

Նորարարական ճամբարի շրջանակներում ուսանողները համագործակցում են գործարար կազմակերպությունների հետ, լուծում են արդի շուկայի պահանջից բխող խնդիրներ: Դասավանդողները և ընկերությունների ղեկավարները համատեղ համաձայնեցնում են խնդիրն ու գործունեության ժամկետները: Ուսանողը ստանում է գիտելիք, հմտություն և բիզնես խնդրի լուծման մասնակից է դառնում:

Արտադրական կենտրոնը համապարփակ միջավայր է ստեղծում կրթական հետազոտությունների և մասնագիտական հմտությունների զարգացման համար՝ ապահովելով նախանմուշների իրական արտադրությունն ու փորձարկումը: Արդյունքում կապ է ստեղծվում գիտահետազոտական կազմակերպությունների և գործարար աշխարհի միջև, զարգացնում են ժամանակակից արտադրության մեթոդները և նպաստում արտադրության ավտոմատացման գործընթացին:

Բիզնես ակադեմիայի շրջանակներում իրականացվում են իրական բիզնես նախագծեր գործատուների կողմից ներկայացված կոնկրետ պատվերների հիման վրա: Ակադեմիայում ապահովվում են ուսանողների գործնական գիտելիքների զարգացմանն ուղղված թրեյնինգներ, ինքնակրթություն, քննարկումներ, թիմային աշխատանք, մենթորինգ, ձեռնարկատիրական հմտությունների զարգացում և այլն:

Վերոնշյալ նախագծի շրջանակներում ՀԱՊՀ թիմը պիլոտային տարբերակով կիրառել է միջառարկայական ուսուցման բաղադրիչը՝ «Ճյուղի տնտեսագիտություն և կառավարում» դասընթացի օրինակով: Արդյունքում, ռադիոտեխնիկայի, կիբեռնետիկայի և հաշվողական տեխնիկայի ուղղություններով սովորող հեռակա ուսանողները ընդգրկվեցին 3-4 անձից բաղկացած թիմերում՝ իրականացնելու համատեղ աշխատանք ավարտական աշխատանքի պարտադիր հանդիսացող տնտեսագիտական բաժնի ընդհանուր կետերի պատշաճ կատարման նպատակով (նկ.5) [3]:



Նկ. 5. Միջառարկայական ուսուցման պիլոտավորման օրինակ

Ամփոփելով արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ նորարարական մանկավարժության կիրառման և ուսուցման նկատմամբ համալիր փոփոխություններ իրականացնելու համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել առաջին հերթին բուհի ռազմավարական պլանում: Նորարարական ուսուցման մոտեցումների մի մասն արդեն իսկ կիրառվում են առանձին դասավանդողների կողմից, սակայն ուսանողների մեջ նորարարական կարողությունների համալիր զարգացում ապահովելու համար այդ մոտեցումները պետք է լինեն համատարած և համակարգված, համալսարանների որոշում կայացնող անձանց անմիջական ներգրավվածությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Tatiana Chemi, Sarah Grams Davy and Birthe Lund**, A Recognition of Emotions and Creativity in Education. – Sense Publishers, 2017.
2. **Моисеева М.В.** Интернет-обучение: технологии педагогического дизайна.- М.: Камерон, 2004.
3. http://lms.vteam.am/course/view.php?id=2

А.А. АБРААМЯН, А.Л. МХИТАРЯН

СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ И ОСОБЕННОСТИ ИННОВАЦИОННОЙ ПЕДАГОГИКИ

Рассматриваются основные особенности инновационной педагогики, требования и привилегии применения, а также инновационные компетенции в рамках педагогики и возможности применения новых образовательных технологий.

Ключевые слова: инновационная педагогика, инновационные компетенции, учебно-педагогический дизайн, новые учебные технологии, междисциплинарное обучение.

A.A. ABRAHAMYAN, A.L. MKHITARYAN

MODERN APPROACHES AND FEATURES OF INNOVATION PEDAGOGY

The main features of innovation pedagogy, its advantages and requirements to the implementation, as well as the innovation competencies in the frame of pedagogy and opportunities of application of modern educational technologies are considered.

Keywords: innovation pedagogy, innovation competencies, instructional design, modern learning technologies, interdisciplinary learning.